ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 11 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

Երևան 0071, Նուբարաշեն 6-րդ փող., 1-ին շենք, հեռ.010-47-52-40, E-mail: 11hatukdproc@mail.ru, Web: http://yerevan11s.schoolsite.am

№ Ե- 58 « 28 » օգոստոսի 2023թ.

ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ -Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 11 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՑ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Մկրտչյան.

«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժ.) դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև 05.01.2023թ-ին կնքված թիվ ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-23/01-4 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) և 10.01.2023 թ.-ին պայմանագրին կից կնքված համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ պետք է մատակարարեր պայմանագրով հաստատված սննդամթերք, որի պատվերը էլեկտրոնային փոստի միջոցով տրվել է 23.08.2023թ.-ին և 24.08.2023թ.-ին, սակայն 28.08.2023թ.-ի դրությամբ չի մատակարարվել :
Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի) Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժ.) դպրոց» ՊՈԱԿ–ը 28.04.2023թ-ին միակողմանի լուծել է պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով տահմանված ժամկետում չի վճարել հայտի , պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները :

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ եթե մինչև սույն թվականի սեպտեմբերի 7-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի 1042281 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 694854 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները , ապա ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ

ՍՊԸ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում <<գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին , իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժ.) դպրոց» ՊՈԱԿ-ի անվամբ բացված 900018001991 հաշվեհամարին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև սույն թվականի սեպտեմբերի 7-ը ներառյալ ներկայացնել «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժ.) դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ